



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

----- 2018 թվականի №---Ն  
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի №273Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 5-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման (ինքնավար էներգաարտադրող-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 7-ի №45Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №273Ն որոշման 1-ին կետով սահմանված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման (ինքնավար էներգաարտադրող-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Պայմանագրի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«1) Առևտրային կանոններ՝**

Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններ, »,

**«7) Հաշվարկային տարի՝**

Ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում է նույն տարվա դեկտեմբերի 31-ին ,».

- 2) Պայմանագրի 1-ին կետի 3-րդ ենթակետում «բայց ոչ ավելի քան 150 կիլովատտը» բառերից հետո լրացնել «, իսկ արևային էներգիայի կիրառմամբ արտադրողների դեպքում մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը՝ մինչև 500 կՎտ-ը» բառերը.
  - 3) Պայմանագրում «Հատուցման կարգը» բառերը և դրա բոլոր հոլովաձևերը փոխարինել «Առևտրային կանոններ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով.
  - 4) Պայմանագրի №2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը վերակնքել ինքնավար էներգաարտադրողների հետ կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման (ինքնավար էներգաարտադրող-բաշխող) պայմանագրերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
2018 թվականի -----ի N----Ն որոշման

Հավելված N2

Հայաստանի Հանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
2016 Վականի հոկտեմբերի 5-ի N273Ն որոշմամբ  
սահմանված պայմանագրի օրինակելի ձևի

## Ա Կ Տ

### ՀԱՏՈՒՑՄԱՆ (ՎՃԱՐՄԱՆ) ԵՆԹԱԿԱ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինքնավար էներգաարտադրող \_\_\_\_\_

Բաշխող \_\_\_\_\_

Հաշվարկային ժամանակահատված \_\_\_\_\_ 20\_\_ թ. մինչև \_\_\_\_\_ 20\_\_ թ.

Հաշվարկային տարվա ընթացքում՝

- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում Բաշխողի կողմից Ինքնավար էներգաարտադրողին ցերեկային սակագնով մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը ( $F_{ցսի}$ )՝ \_\_\_\_\_ կՎտժ,
- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում Ինքնավար էներգաարտադրողի կողմից ցերեկային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում Բաշխողին մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը ( $F_{ցսի}$ )՝ \_\_\_\_\_ կՎտժ,
- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում Բաշխողի կողմից Ինքնավար էներգաարտադրողին գիշերային սակագնով մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը ( $F_{գսի}$ )՝ \_\_\_\_\_ կՎտժ,
- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում Ինքնավար էներգաարտադրողի կողմից գիշերային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում Բաշխողին մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը ( $F_{գսի}$ )՝ \_\_\_\_\_ կՎտժ,
- (i-1)-րդ Հաշվարկային ժամանակահատվածում ցերեկային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի հաշվեկշռային հաշվարկի արդյունքը ( $E_{\psi g(i-1)}$ )՝ \_\_\_\_\_ կՎտժ,
- (i-1)-րդ Հաշվարկային ժամանակահատվածում գիշերային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի հաշվեկշռային հաշվարկի արդյունքը ( $E_{\psi q(i-1)}$ )՝ \_\_\_\_\_ կՎտժ,

- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում ցերեկային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի հաշվեկշռային հաշվարկի արդյունքը ( $E_{\phi g}$ )` \_\_\_\_\_ կՎտժ,
- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում գիշերային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի հաշվեկշռային հաշվարկի արդյունքը ( $E_{\phi q}$ )` \_\_\_\_\_ կՎտժ,
- \* Ինքնավար էներգաարտադրողի կողմից արտադրված էլեկտրական էներգիայի քանակը ( $E_{\omega}$ )` \_\_\_\_\_ կՎտժ,
- \*\* Բաշխողի և Ինքնավար էներգաարտադրողի միջև հաշվարկային տարվա ընթացքում ցերեկային ՎԷ փոխհոսքերի տարբերությունը ( $E_g$ )` \_\_\_\_\_ կՎտժ,
- \*\* Բաշխողի և Ինքնավար էներգաարտադրողի միջև հաշվարկային տարվա ընթացքում գիշերային ՎԷ փոխհոսքերի տարբերությունը ( $E_q$ )` \_\_\_\_\_ կՎտժ,
- \*\* Բաշխողի և Ինքնավար էներգաարտադրողի միջև հաշվարկային տարվա ընթացքում ՎԷ փոխհոսքերի տարբերությունը ( $E_{\omega}$ ), ( $E_{\omega} = E_g + E_q$ )` \_\_\_\_\_ կՎտժ,
- \*\* Հաշվարկային տարվա Հաշվարկային ժամանակահատվածներում « $E_{\phi g}$ » դրական մեծությունների հանրագումարը ( $E_{\phi g}$ )` \_\_\_\_\_ կՎտժ,
- \*\* Հաշվարկային տարվա Հաշվարկային ժամանակահատվածներում « $E_{\phi q}$ » դրական մեծությունների հանրագումարը ( $E_{\phi q}$ )` \_\_\_\_\_ կՎտժ:

\* Սույն ակտում լրացվող « $E_{\omega}$ » մեծության արտացոլումը կրում է զուտ տեղեկատվական բնույթ և չի մասնակցում հատուցման հարաբերություններին:

\*\* Սույն ակտում « $E_g$ », « $E_q$ », « $E_{\omega}$ », « $E_{\phi g}$ » և « $E_{\phi q}$ » մեծությունները լրացվում են տարեկան մեկ անգամ` տարեկան արդյունքներով:

Հիմքը \_\_\_\_\_

**Ինքնավար էներգաէներգաարտադրող**

**Բաշխող**

(ստորագրություն, անուն, ազգանուն: Իրավաբանական անձի դեպքում` պաշտոն)

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

\_\_\_\_\_ 20 \_\_\_\_ թվական

\_\_\_\_\_ 20 \_\_\_\_ թվական

Կ.Տ.  
(առկայության դեպքում)

Կ.Տ.  
(առկայության դեպքում)